ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-4-3-Ա

ք. Երևան 31.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի մարտի 31-ի նիստում քննարկեց 2023 թվականի մարտի 7-ին հայտատուի ներկայացուցիչ Արմեն Խաչատրյանի կողմից ներկայացված՝ «Փրոսփերիթի» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Երևան, Ադոնցի 6, բն. 268, AM) «D'Arte ItalYana» (No20221494) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում՝ 30-րդ դասի ապրանքների համար հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման վերը նշված դասի ապրանքների համար, քանի որ ապրանքային նշանի վրա առկա «D'ARTE ITALYANA» գրառումը (իտալական արվեստ) սպառողին կարող է մոլորության մեջ գցել ապրանքի աշխարհագրական ծագման և արտադրողի վերաբերյալ հարցերում: Այսինքն՝ միջին սպառողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե նշանը պատկանում է իտալական ընկերությանը կամ արտադրվում է Իտալիայում, քանի որ իտալական մակարոնեղենը հայտնի է ողջ աշխարհում, սակայն նշանը ներկայացված է հայկական «Փրոսփերիթի» ՍՊ ընկերության կողմից:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները, սակայն որոշման որևէ առաջարկ չներկայացվեց: Հնչեցին կարծիքներ այն մասին, որ ներկայացված ապրանքային նշանը չի կարող սպառողներին մոլորության մեջ գցել ապրանքների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում:

Բողոքարկման խորհրդի անդամների մի մասը հակառակ կարծիք ուներ: Նաև ներկայացվեց առաջարկ ապրանքային նշանը գրանցել ապրանքների ցանկը սահմանափակելով և նշելով, որ ապրանքները պատրաստված են իտալական բաղադրատոմսերով, իտալական բաղադրամասերով, իտալական հումքով և ավանդույթներով:

Բողոքարկողը համաձայն էր ձևավորված նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ նման մոտեցման արդյունքում հայտարկված ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 5 կողմ և 2 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայտատուի ներկայացուցիչ Արմեն Խաչատրյանի կողմից ներկայացված՝ «Փրոսփերիթի» ՍՊԸ ընկերության «D'Arte ItalYana» (No20221494) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակի բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել հետևյալ ապրանքների համար. «դաս 30. մակարոնեղեն, մակարոնային արտադրատեսակներ՝ միջուկով (մսից կամ այլ մթերքից) կամ առանց (այդ թվում՝ ռավիոլի), հրուշակեղեն. թխվածքաբլիթ. քաղցրավենիք. հացահատիկային արտադրանք. նրբաբլիթներ. խմորեղեն (ալրային հրուշակեղեն). չոր թխվածքաբլիթ. պիցաներ. սոուսներ մակարոնեղենի համար. պատրաստի խմոր. խմոր հրուշակեղենի, պիցայի համար. հաց. չորահաց. պաղպաղակ. բոլոր վերը թվարկվածները՝ պատրաստված իտալական բաղադրատոմսերով և/ կամ իտալական բաղադրամասերով և/կամ իտալական ավանդույթներով և/կամ իտալական հումքով (այդ թվում՝ իտալական ալյուրով)»:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ